Ա. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՔՔԱՐԻ ՔՐԴԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ԺԴ ԴԱՐ)

Քրդական ցեղերի մուտքը Հարավային Հայաստան և քրդական իշխանությունների կազմավորման խնդիրը առ այսօր հայագիտության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել։ Հայկական աղբյուրների տեղեկությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը և դրանց համադրությունը Հայաստանի հարավ-արևմտյան գավառներում պահպանված արաբերեն վիմագիր արձանագրությունների հետ, մասամբ լույս է սփռում այդ իշխանությունների ժամանակագրության, տոհմաբանության և սոցիալ-քաղաքական պատմության վրա։

ԺԴ դարում Հարավային Հայաստանում արդեն նկատվում են քրդական մի քանի իշխանություններ, որոնց պատմությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի զգալի հատվածի պատմական ճակատագրի հետ և արժանի է հատուկ լուսաբանության։

Այդ իշխանություններից պետք է հիշատակել Բաղեշի (Ռոժակ ցեղի), Վան-Ոստանի (Շամոյան կամ Հաքքարի ցեղի) և ավելի փոքր իշխանություններ՝ Խիզանում, Հազոյում, Ջերմուկում, Սպարկերտում, Բալուում և այլ գավառներում։ Այս իշխանությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Հաքքարի կամ Շամոյան (Շամբոյան, Շամոանից) քրդական իշխանությունը։

Մինչև վերջերս իշխում էր այն տեսակետը, որ Վանը, Ոստանը, Ջուլամերիկը և Հաքքարիյան ընդգրկող քրդական իշխանության հիմնա-*

---

* *Գիտական գրականության մեջ «Հաքքարի» տերմինը օգտագործվում է թե՛ որպես տեղանուն (գավառ), թե՛ որպես ցեղանուն-տոհմանուն (տե՛ս.* „Hakkari", EI, N. E., tome 3, Leiden-Paris, 1971, p. 85, دهخدا، لغة نامه، حكارى، تهران (ص.٧٥)։ *Սույն հոդվածում «Հաքքարի» տերմինով նկատի ունենք տոհմացեղային պատկանելությունը, ծագումը, իսկ գավառի կամ նահանգի համար ընդունում ենք արաբական մատենագրության ավանդած «Հաքքարիյա»* (حكارية، هكارية) *աշխարհագրական անվանումը։*

դիրը Ասադ ադ-դին Քալանի իբն Իմադ ադ-դինն է (մոտ ԺԵ դ. 80—90-ական թթ.), որի որդին եղել է նշանավոր Իզզ ադ-դին Շիր ամիրը։ Այս տեսակետը գիտական գրականության մեջ տարածում ստացավ հայտնի տոհմաբան Ե. Ցամբաուրի, պատմաբան Մ. Ա. Զաքիի և այլոց ուսումնասիրությունների շնորհիվ[1]։

Հետազոտողների այս խումբը, որը բացառապես ելնում է Շարաֆ-նամեի տվյալներից և անվերապահորեն ընդունում է դրանք, խարխափում է Շարաֆ-խանի բերած բազմաբնույթ (ականջալուր, ավանդապատում, գրավոր) տեղեկությունների մեջ, որոնք հաճախ շփոթ են առաջացնում և չեն հաստատվում այլ աղբյուրների փաստական տվյալներով։ Հիմք ունենալով Շարաֆ-նամեի հաղորդումները, վերոհիշյալ հետազոտողները Իզզ ադ-դին Շիր Ա-ին (հաքքարի իշխանության հիմնադիրը) նույնացրել են ԺԵ դարի վերջին քառորդում իշխած Իզզ ադ-դին Շիր Բ-ի (Իզզ ադ-դին իբն Ասադ ադ-դին) հետ։ Հետևաբար, հաքքարի իշխանների՝ նրանց կազմած տոհմածառում բացակայում են հաքքարի ամիրության հիմնադիր Իզզ ադ-դին Շիր Ա-ն և նրա հետնորդները, իսկ տոհմի մյուս անդամների (ԺԵ—ԺԶ դդ.) ծննդաբանությունը բերված է ըստ Շարաֆ-նամեի տվյալների, մի հարց, որը նույնպես վերանայման ենթակա է։ Ահա նրանց կազմած տոհմածառը (Ե. Ցամբաուր)։

Վանի, Ոստանի, Զուլամերիկի և Հաffարիյայի տերերը (իշխանները)



Մեր դարի 50-ական թվականներից հետո, հայկական աղբյուրների և հատկապես հայերեն ձեռագրերի հիշատակարանների նորահայտ տվյալների լույսի ներքո և ակադ. Լ. Ս. Խաչիկյանի պրպտումների շնոր-

հիվ պարզվեց, որ այս ամիրության հնագույն ներկայացուցիչը՝ հայկական աղբյուրներից մեզ հայտնի ամիր Եզդին-Շերը (Իզզ ադ-դին Շիր) իշխել է ոչ թե ԺԵ դարի վերջին քառորդում, այլ ԺԴ դարի 80-ական թվականներից[2]։ Բացի դրանից, Լ. Խաչիկյանը հիշատակարանների տվյալներով ի հայտ բերեց այս իշխանական տան մի շարք ամիրների անուններ և քրդական այս ամիրության (և տոհմի) պատմության վերանայման հիմքը դրեց։ Նախորդ հետազոտողներից մի քայլ առաջ անցնելով, նա ի մի բերեց հայկական աղբյուրներում պահպանված ամիրության վերաբերյալ կցկտուր տեղեկությունները, ցույց տվեց, որ ԺԴ դ. 80-ական թվականներից հիշատակվող քուրդ ամիրները մեծ դեր են խաղացել Հայաստանի հարավային նահանգների քաղաքական կյանքում։

Սակայն վերոհիշյալ երկու տեսակետներն էլ վերանայման կարիք ունեն։

Սույն հոդվածում փորձել ենք քննության առնել սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները Վան-Ոստանի հաքքարի իշխանության կազմավորման մասին, վերանայել հաքքարի իշխանների ճյուղագրությունը և ցույց տալ քրդական այս իշխանության ձևավորման ժամանակագրությունը և անկման պատճառները։

ԺԴ դարի առաջին կեսում քրդական ցեղերի տարածման մասին որոշ տեղեկություններ են տալիս հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ Այսպես, 1318 թ. գրված հիշատակարանը նշում է. «...արդ, ես Խնդուբէկ դերձակս՝ ի յՈստան քաղաքի, գնեցի ի քրդու, զի էր գերի բերած սուրբ ավետարանս...»[3]։ 1338 թ. քրդական ցեղերը (զորախմբերը) հանդես են գալիս Զոբանյան տիրակալ Թամուրտաշի զորքերի մեջ, որը պայքար էր մղում Երզնկայում (և Արևմտյան Հայաստանում) անկախացած Ալա ադ-դին Հարաթնայի (Էրեթնայի) դեմ. «...ի Զէ հայոց թուականի (1338)... Տամուրտաշ յայտնեցաւ, և եկն ի վերայ աստուածապահ քաղաքիս Երզնկայիս, և ժողովեց զամենայն շուրջակայիցս զքուրթ և զթաթար, և պաշարեաց զքաղաքս...»[4]։ Այս վկայության մեջ ուշագրավ է հենց քրդական ցեղերի երևան գալու փաստը Զոբանյանների մոտ։ Կարելի է մտածել, որ նրանք հպատակվել էին Զոբանյաններին և ստանձնել զինական որոշակի օգնություն ցույց տալու պարտականություն։

Խլաթում պահպանված արաբերեն տապանագրի համաձայն ռաբի II ամսին 728 (1328 թ. հունվարին) Խլաթի քրդերը սպանում են Խլաթի «Մեծ ամիր Թիմուրտաշ իբն Թուրտաշին»[5]։ Հավանաբար այս ժամանակահատվածին են վերաբերում Թովմա Մեծոփեցու խոսքերը. «Քուրդքն կողոպտեաց զտառապեալ երկիրն»[6]։

1351 թ. Կիլիկիայում գրված ավետարանի հիշատակարանում Կիրակոս գրիչը նշում է. «Թվ. Պ (1351) ի չար և ի դառն ժամանակիս, զի վախ[ուցեա]լ էաք յերկրէն Ախբակո՛, ի պատերազմէ այլազգաց...»[7]։ 1355 թ. Աղթամարում գրված Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «...յաւուրս անիշխանութեան... զի բռնացեալ կալան զմիջերկրեայս ամենայն ազգատոհմ կարապետի Նեռինն ասացեալ։ Եւ նեղեն յոյժ զազգս քրիստոնէից մինչև յելս ոգւոց»[8]։ Ավելի ուշ՝ այլ հիշատակագիր վկայում է, որ Ոստանի հայ ազգաբնակչությունը մեծ զրկանքներ է կրել 1377 թ. քրդերի խժդժություններից. «բազումք ի քրիստոնէից սրախողող են ի քրդէն»[9]։

Ջոբանյանների անկումից (1357 թ.) հետո Հարավային Հայաստանն անցնում է ջելաիրյան տիրակալների ձեռքը։ Սուլթան Ուվեյսին (1356—1374) հաջորդեց Հուսեյնը (1374—1382), որը սպանվեց Թավրիզում, եղբոր՝ Ահմադի կողմից։ Հարավային Հայաստանում այս ժամանակ իշխում էր Ուվեյսի մյուս որդին՝ Բայազիդը (1382—1384)[10]։

Ջելաիրյան սուլթան Ահմադը գահ բարձրացավ Թավրիզում 1382 թ.։ Բայց նրա դեմ դուրս եկան եղբայրները։ Հենվելով կարա-կոյունլու Կարա-Մուհամմադի զինական ուժերի վրա, նրան հաջողվում է պարտության մատնել եղբայրներին[11]։ Սակայն իրադրությունը փոխվում է, և նա պետք է հաղթահարեր Հայաստանի կենտրոնական մասերում զորեղացած Կարա-Մուհամմադի վտանգը և վերջապես դիմագրավեր Ոսկե Հորդայի խան Թողթամիշի՝ 1384 թ. արշավանքը, բայց նա առանց դիմադրության փախչում է Բաղդադ[12]. «...եւ ղանն Թաւրիզու սուլդան Ահմատն ելեալ գնաց փախստական ճանապարհաւն Ռշտունեաց Ոստանու, առաջնորդութեամբ ամիրային Մառաց Եզդնա՝ ի Բաբելոն քաղաք, որ այժմ Պաղտատ կոչի, առ ազգականս և զօրս իւր. զի ի նոյն ժամանակին և նոցա տիրէին»[13]։ Հիշատակարանից երևում է, որ Ռշտունիքի քուրդ իշխան Եզդինը (Իզզ ադ-դինը) եղել է ջելաիրյան սուլթան Ահմադի դաշնակիցը։

Թե երբ է հաստատվել Իզզ ադ-դին (Շիրը) Ոստանում կամ Վանում, այդ մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս ոչ միայն հայկական աղբյուրները, այլև Հարավային Հայաստանի արաբերեն վիմագիր արձանագրությունները։ Այսպես, մինչև օրս Ոստանում կանգնած «Հալիմա խաթուն-ի» դամբարանի մուտքի պարակալի արաբերեն շինարարական արձանագրության մեջ կարդում ենք.

۱. امر بعمارة هذه القبة الشريفة الملك عز الدين

۲. برسم المرحومة حليمة خاتون فى محرم سنة ستة و ثلاثين و سبعماية [14]

1. Հրամայեց կառուցել այս օրհնյալ դամբարանը (կուբբան) Մալիք Իզզ ադ-դինը,
2. Հանգուցյալ Հալիմա խաթունի նախագծմամբ (համար) յոթ հարյուր երեսուն վեց թվականի մուհառռամ ամսին (21.VIII—20.IX. 1335)[15]։

Թեև դամբարանի այս վիմագիրը չի բովանդակում մալիք Իզզ ադ-դինի տոհմական պատկանելության մասին վկայող որևէ արտահայտություն, չի տալիս նրա հայրանունը և ճյուղագրությունը, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ նա ծագում է քրդական հաքքարի տոհմից[16]։ Այս իշխանի ավելի վաղ գործունեության մասին տեղեկություններ չունենք, սակայն հայկական աղբյուրներում 1384 թվականից սկսած որպես Վանի և Ոստանի տեր հիշատակվում է «Եզդին-Շեր» անունով մի իշխանավոր, որը կարևոր դեր է խաղացել Հարավային Հայաստանի մի շարք գավառների քաղաքական կյանքում։ Այս քուրդ իշխանը այնուհետև հիշատակվում է Թովմա Մեծոփեցու մոտ՝ Լանկթամուրի կողմից Վանի բերդի գրավման կապակցությամբ 1387 թ.։

Հայկական աղբյուրների վկայությունների և արաբերեն վիմագրի միջև գրեթե 50 տարվա տարբերություն է առաջանում։ Մեզ թվում է, որ արաբերեն վիմագիրը հանդիսանում է հայկական աղբյուրներից Եզդին-Շեր անունով հայտնի իշխանի մասին պահպանված հնագույն վկայությունը։ Դամբարանի արաբական վիմագիրը փաստորեն ցույց է տալիս, որ Մալիք Իզզ ադ-դինը Ոստանում հաստատվել էր 736/1335 թ.։ Թեև հետագա ժամանակահատվածում (1335—1384 թթ.) կոնկրետ տեղեկություններ չեն հասել Մալիք Իզզ ադ-դինի մասին, սակայն ավելի ուշ՝ սկսած 1384 թ. հայկական աղբյուրներում հիշատակվում է Եզդին-Շեր (Իզզ ադ-դին Շիր) իշխանը։ Նրա մասին, Լանկթամուրի կողմից Վանի բերդի գրավման կապակցությամբ, Թովմա Մեծոփեցին հաղորդում է. «Եւ անտի չուեալ (Թամուրը—Ա. Խ.) գնաց ի գաւառն Տոսպայ ի վերայ ամրոցին Վանայ. Եւ առ ծամայն ամիրայն Եզդին յազգէն Սենեքերիմեանց ոչ եկն առ նա, այլ ապստամբեալ ի նմանէ մնաց ի յամրոցին հանդերձ ամենայն զօրօքն եւ բազմութեամբ քրիստոնէից։ Եւ յետոյ իջեալ ի յամրոցէն՝ գնաց առ նա. Եւ նորա կալեալ կապեաց զնա. Եւ եկեալ ի վերայ ամրոցին՝ քառասուն օր ի նեղութեան արկին եւ զբազումս սպանին ի զօրաց անօրէն Ջաղաթային։ Եւ նոցա նեղեալ ի հացէ եւ ի ջրոյ՝ ոչ կարացին կալ ի խսարին, եւ ետուն զբերդն ի ձեռս նոցա»[17]։

Թովմա Մեծոփեցու վկայությունը ուշագրավ նորություն է նաև նրանով, որ այնտեղ հիշատակված է՝ «Եզդին յազգէն Սենեքերիմեանց»։

Այս հիշատակությունը Լ. Խաչիկյանին և Հ. Մանանդյանին հիմք է տրվել ենթադրելու, որ Եզդին-Շեր ամիրը մայրական գծով սերում է Արծրունյաց հայ թագավորական տնից[18]։

Եթե հիմք ընդունենք Թ. Մեծոփեցու վկայությունը, «Եզդին յազգէն Սենեքերիմեանց», ապա կարելի է ասել, որ Ոստանի դամբարանի արաբերեն վիմագրում հիշատակվող Հալիմա խաթունը հենց Իզզ ադ-դին Շիրի ոչ թե կինն է, այլ հայուհի մայրը, որի պատվին էլ կառուցված է բարձրարվեստ կոթողը։ Ըստ դամբարանի վիմագրի, Հալիմա խաթունը 1335 թվականին արդեն մահացել էր։

Հայկական աղբյուրներից հայտնի Իզզ ադ-դին Շիրի կինը հիշատակվում է մի շարք վկայությունների մեջ։ Սկսած 1389 թ. ըստ այդ վկայաբանությունների Իզզ ադ-դին Շիրի կինը եղել է Փաշա խաթուն անունով մի թուրքմենուհի[19]։ Այդ փաստը ճշտվում է Խլաթում մինչև օրս պահպանված Փաշա-Խաթունի արաբերեն տապանագրի տվյալներով։ Այնտեղ մենք կարդում ենք. «Տեր Աստված, օրհնիր քո խղճահարությամբ և կարեկցությամբ այս շիրիմում հանգիստ գտնող... Փաշա խաթունին՝ դուստրը Մեծ ամիր և հանգուցյալ ամիր Շեյխ Շարաֆի՝ որդի մեծ ամիր Ամինի... որդի Թեգինի որդի ամիր Իզզ ադ-դին ալ-Ռոժակի (ալ-Ռոշակի, Ռոշկի). մահացել է յոթ հարյուր և [իննսուն]ութ թվականի ռաջաբ ամսին (ապրիլ 1396)[20]։ Այս արձանագրությունը ցույց է տալիս, որ Փաշա խաթունը ոչ թե թուրքմենուհի է, այլ քրդական Ռոժակ ցեղից, և մահացել է 1396 թ.։ Բերված թվականը ժամանակագրական տեսակետից նաև համապատասխանում է հայերեն վկայաբանությունների տվյալներին։ Թեև արաբերեն արձանագրության մեջ չի ասվում, որ Փաշա խաթունը Իզզ ադ-դինի կինն է, բայց նրա տոհմիկ ծագումն ու մահվան տեղը և թվականը հիմք են տալիս ենթադրելու, որ արաբերեն վիմագրի՝ Շեյխ Շարաֆի դուստր Փաշա խաթունը պետք է լինի հենց նշանավոր Իզզ ադ-դին ամիրի կինը, որը հայկական աղբյուրներից հայտնի է Փաշա խաթուն անունով։

Վանի (և Ոստանի) տեր Իզզ ադ-դինի իշխանության ժամանակագրությունը պարզելու համար դիմենք հայկական աղբյուրներին։

Եզդին (Իզզ ադ-դին) ամիրը, ինչպես ասվեց, հիշատակվում է որպես Վանի տեր 1387 թ. Լանկթամուրի առաջին արշավանքի ժամանակ։ Նրա հետագա գործունեության մասին է վկայում Սիմէոն վարդապետի հիշատակարանը. «ՊԽԱ թուին (1392) էառ Ամիր-Էզդին զՈստան քաղաք յեղբօրէն իւրմէ, նաւասարդի ամիս, ի յայտնութեան պահոց երեքշաբթի, և շատ պակասութիւն էած քրիստոնէից»[21]։ Այս վկայությու-

նից երևում է, որ Ոստան քաղաքը 1392 թվականից առաջ գտնվել է Իզզ ադ-դինի եղբոր ձեռքում, որի անունը հայ հիշատակագիրը չի տալիս։ Բարեբախտաբար մեկ այլ հիշատակարան պահպանել է ավելի հին և արժեքավոր վկայություն, որը լույս է սփռում Ոստանի նախկին տիրակալ Իզզ ադ-դինի եղբոր գործունեության վրա։ Այսպես, 1386 թ. ավետարանը նորոգող ոմն Արղուն հիշատակում է. «...ի թուականիս Հայոց ՊԼԵ (1386), ես Արղունս, որ էի յապարանս ամիր Մէլիք-Ասադի, յՈստան քաղաքի, ետու վերստին նորոգել զավետարանս հիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ Քուրդամիրի, և մաւրն իմոյ Հերիքտիկնայ և այլ ամենայն մերձավորաց»[22]։

Լ. Խաչիկյանը նկատել է, որ այստեղ հիշատակած ամիր Մելիք-Ասադը պետք է լինի Ոստան քաղաքի քուրդ կառավարիչը կամ իշխանը[23]։ Այս վկայությունը փաստորեն լրացնում է նախորդ հիշատակարանի տվյալները, ըստ որի, Իզզ ադ-դինը Ոստանը գրավել էր եղբոր ձեռքից. այստեղ տրվում է հենց այդ եղբոր անունը՝ ամիր Մելիք-Ասադ, որը 1386 թ. եղել է հենց Ոստանի տիրակալը։ Թե երբ է նա հաստատվել Ոստան քաղաքում, դժվար է ասել, բայց Հալիմա Խաթունի դամբարանի արաբերեն վիմագրի համաձայն 1335 թվականին Ոստանում իշխում էր Մալիք Իզզ ադ-դինը, որի ձեռքից էլ, հավանաբար, քաղաքը խլել էր եղբայրը՝ ամիր Մելիք-Ասադը։ Վերջինիցս էլ քաղաքը նորից վերագրավել էր նրա եղբայր Իզզ ադ-դին ամիրը՝ 1392 թվականին։

1386 թ. հիշատակությունը ժամանակագրական տեսակետից հայկական աղբյուրներում ամենահին վկայությունն է՝ Ոստանում. հաքքարի Մելիք-Ասադ իշխանի տիրապետության մասին։

1392 թ. սկսած հայերեն հիշատակարաններն արժեքավոր վկայություններ են հաղորդում քուրդ ամիր Իզզ ադ-դին Շիրի նոր ոտնձգությունների մասին. «Այս Ամիր-Եզդինս, որ հակառակ եղեւ Յուսուփին, տէրն Ոստանայ ի յ 842(1392) թուականին սպան զկաթողիկոսն Աղթամարա զՋաքարիա անուն...»[24]։

Զաքարիա կաթողիկոսն իրականում նենգաբար սպանվել է Ոստանի դատավոր Ջաֆերի ամբաստանության և հավատափոխ չլինելու պատրվակով՝ քաղաքի մոլեռանդ մահմեդականների ձեռքով. նրա մահվան թվականը և օրը ճշտված է՝ 842 Մեհեկի 15-ը, որը համապատասխանում է 1393 (և ոչ թե 1392) թվականի հունիսի 25-ի չորեքշաբթի օրվան[25]։

Քուրդ իշխանի հարաբերությունների սրումը կարա-կոյունլու Յուսուֆի հետ ըստ երևույթին կապված էր Վանա լճից արևելք գտնվող գավառների յուրացման հետ։ Վերջինս ձգտում էր ամրապնդել իր պետու-

թյան սահմանները և գրավել քուրդ իշխանի տիրույթները, որոնք Վանա լճից արևելք և հարավ ընկած գավառներն էին և, փաստորեն, խանգարում էին նրա նվաճողական պլանների իրագործմանը։ Կարա-կոյունլու պետության ամրապնդումը պահանջում էր առաջին հերթին վերջ տալ Վանի և Ոստանի քրդական իշխանությանը։

Իզզ ադ-դին Շեր (Ա-ն) իր իշխանության սկզբնական շրջանում հրպատակվել էր Լանկթամուրին (1370—1405)[26] և որպես նրա դաշնակից չաղաթայական զորագնդերի հետ շարունակում էր հանդես գալ Կարա-Յուսուֆի դեմ։ Այդ մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Թովմա Մեծոփեցին. «Եւ ի նոյն աւուրս (1395) եկն տէրն Ոստանայ Ամիր-Եզդին անուն Չաղաթայիւք ի վերայ Յուսուփին և պատերազմեցան սակաւ աւուրս, եւ դարձեալ հաշտեցան»[27]։ Այս վկայությունից երևում է, որ քուրդ իշխանն ակտիվ օգնություն է ցույց տվել Լանկթամուրի զորքերին՝ Կարա-Յուսուֆին ջախջախելու գործում։ Այլ աղբյուրների համաձայն, ցույց տված ռազմական օգնության համար Լանկթամուրը Իզզ ադ-դինին նշանակել է Ավնիկ ամրոցի բերդապահը[28]։

Կարա-Յուսուֆը սկսեց պատերազմ մղել Արճեշի իշխանի և Ոստանի տեր Իզզ ադ-դին իշխանի դեմ[29]։

Մեծոփեցին այնուհետև շարունակում է. «Եւ ի միւս օրն Չաղաթայ Պարոն մի ի բերդէն Բասենու եկն 400 մարդով ի գիւղն Աղի յօգնութիւն ամիրային, եւ եհարց զխաղաղութիւն նոցին...»[30]։ Այս հատվածից երևում է, որ չաղաթայական զորքն օգնություն է ցույց տվել հենց Իզզ ադ-դին Շեր ամիրին, չնայած Մեծոփեցին չի հիշատակում ամիրի անունը, սակայն շարադրանքից և դեպքերի հաջորդականությունից ակնհայտ է, որ խոսքն այստեղ «Եզդին Շեր» ամիրին օգնություն ցույց տալու մասին է։

Պատերազմական գործողությունները Իզզ ադ-դին իշխանի և Կարա-Յուսուֆի միջև շարունակվում են։ Թեև քուրդ իշխանին օժանդակում էին չաղաթայական զորքերը, բայց Կարա-Յուսուֆը կարողանում է բանտարկել քուրդ իշխանին. «յայսմ ամի (1398) ըմբռնեցին զպարոնն Հայքարա, որ էր յոյժ խնամակալու ազգիս քրիստոնէից, առաւել քան զնախնիքն իւր, զի ըմբռնեցին զնա և դրին ի բանդի ի մէջ ծովու, և զաւրաւք բազմաւք եկին ի Ձորն Դիզա և աւար հարին մինչ ի Ջուլամէրկ և ի գաւառ, զոմանց զտուն այրեցին, զոմանց զվաստակ կերան և պահուստն զամէն գտան, և զանառիկ ամրոց Անին առին...»[31]։

Այս հիշատակությունից կարելի է կռահել, որ խոսքն այստեղ Իզզ ադ-դինի տիրույթները ավարառելու մասին է։ Վկայության համաձայն

նրա տիրույթները տարածվում էին Դիզի ձորից (Փոքր Աղբակում) մինչև Ջուլամերիկ և Անի ամրոցը։ Քուրդ իշխանի բանտարկությունը 1398 թ. հաստատում է նաև այլ հիշատակագիր. «...գրեցաւ գիրքս ի գաւառս, որ կոչի Բարմն, որ է Ախբակ.... յիշխանութիւն Միր Ալադնի, և Ամիր Ջէնդնի, որ է դեռ ըմբռնած ի մէջ կղզոյն Ախթամարայ...»[32]։

Լանկթամուրի պետության թուլացման, մասնավորապես նրա մահից (807/1405 թ.) հետո Վանի և Ոստանի քուրդ ամիր Իզզ ադ-դին Շիրը, նրա որդի «Մելիքը», ինչպես նաև Բաղեշի տեր Շամս ադ-դինը հրապատակություն հայտնեցին Կարա-Յուսուֆին. «Իսկ թուրքմանն Յուսուփ յետ սատակման Թամուրին ի յ 857 (1408) առեալ զսակաւ զօրս իւր տարապեալ և անզէն ելեալ ի բանտէն Դամասկոսի եկն վերստին յաշխարհս մեր, նախ ի քաղաք Բաղէշ։ Եւ որդի ամիր Շարաֆին Շամշատին ամիրայն գնացեալ ընդ առաջ նորա՝ յոյժ մեծարեաց զնա հացով, ջորեօք, ձիովք, զինուք և ամենայն զինուորական և պատերազմական պատրաստութեամբք։ Եւ արեալ եկն ի վերայ աշխարհին Ռշտունեաց և վանակերտին Վարագայ... եւ ապա եկեալ ի հնազանդութիւն Եզդին ամիրայն և Մէլիք որդին»[33]։ Բաղեշի քուրդ ամիր Շամս ադ-դինը եղել է Կարա-Յուսուֆի դաշնակից՝ ընդդեմ «թամուրյանների»։ Այս վկայության համաձայն Վան-Ոստանի տեր Իզզ ադ-դին Շիրը նույնպես հպատակություն է հայտնում Կարա-Յուսուֆին։

Ուշագրավ է, որ Թովմա Մեծոփեցու վերոհիշյալ վկայության մեջ Եզդին ամիրի հետ հանդես է գալիս նաև նրա որդի «Մելիքը»։ Վերջինս հայերեն ձեռագրերի հիշատակարաններում սկսած 1412 թ. բազմիցս հիշատակվում է ամիր Եզդինի հետ. «Իսկ ՊԿԱ (1412) ամի թուականութեան Հայկազեան տոմարիս, ի թագաւորութեան թաղթին Ղարայ-Յուսուֆին և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս Ամիր Եզդնին և որդւոյն իւրոյ Մելիքին, որ յոյժ խնամածու և բարեկամ քրիստոնէից»[34]։ Երկրորդ անգամ այս «Մելիքը» հիշատակվում է 1418 թ. «...ի թուականութեան հայկազեան տոմարիս ՊԿէ (1418) և ի հայրապետութեան տեառն Դաւթի, ի յերկիրս Ըռըշտունեաց... ի ղանութեանն պարոն Յուսուֆին, և ի բռնակալութեան Մերոյս նահանգի Ամիր-Էզդնին և որդոյն իւրոյ Մէլիք-Մահմադին, որոց աւգնական և պահապան լիցի նոցա տէր Աստուած, վասն զի յոյժ խնամածուք են ազգիս Հայոց...»[35]։ Այս վկայությունը ցույց է տալիս, որ Իզզ ադ-դին Շիրի որդու անունը եղել է Մահմադ (Մուհամմադ)։

1419 թվականին Նարեկ գյուղում գրված ավետարանի հիշատակարանում Ոստանի նշանավոր ամիր Իզզ ադ-դին Շիրը այլևս չի հիշա-

տակվում, նրան արդեն փոխարինել էր որդին՝ Մելիք Մահմադը. «...ի թուականութեանս Հայոց ՊԿԸ (1419) ի հայրապետութեան տեարն Դաւթի, և իշխանութեան Մերոյ նահանգիս՝ Միլիքի՝ որդոյ Ամիր Էզդին Մէլիքին»[36]։

Այս վկայությունը հիմք է տվել Լ. Խաչիկյանին ենթադրելու, որ քուրդ իշխան Իզզ ադ-դին Շիրը իշխել է մինչև 1419 թ.[37]։ Սակայն պետք է ասել, որ նրա որդին՝ Մելիք Մահմադը, սկսած 1412 թվականից հիշատակվում է հոր հետ, հավանաբար վերջինիս ծերության պատճառով իշխանությունը վաղուց անցել էր որդուն, բայց հայ հիշատակագիրները ավանդաբար շարունակում էին հիշատակել ամիր Իզզ ադ-դինին[38]։

Ուշագրավ են նաև «Եզդին» ամիրի փոխհարաբերությունները հարևան իշխանությունների և հատկապես Բաղեշի քուրդ տիրակալների հետ։ Սամվել Անեցու շարունակողը գրում է. «Ի թուին ՊԾԴ (1405) Շնմզդին Բաղէշու տէրն եկն և այրեաց զԱրծկոյ երկիրն, և սպանեաց շատ մարդ՝ և քահանայ բայց առնուլ ոչ կարաց, և խսարեաց զնա աւուրս ԺԳ (13), եւ տէր նորա եդ ամիր Եզդին»[39]։ Այս վկայությունից երևվում է, որ Իզզ ադ-դինի տիրույթների մեջ էր նաև Արծկէն։ Երբ Բաղեշի տեր Շամս ադ-դինը փորձում է գրավել այն, նրա դեմ դուրս է գալիս Իզզ ադ-դինը։ Բաղեշի և Վան-Ոստանի երկու քուրդ ամիրների միջև մղված պայքարը շարունակվել է։ Ս. Անեցու շարունակողի վկայությամբ՝ «Ի ՊԿԸ (1419) Ամիր Եզդին բարկացեալ Վաստանայ՝ գնաց ի Բաղէշու երկիրն և այրեաց Կ(60) գեօղ մինչև ի գաւառն Սեղմայ»[40]։

Թե երբ է մահացել Իզզ ադ-դին Շիրը և որքան է իշխել նրա որդի Մելիք-Մահմադը, այդ մասին վկայում է Ս. Անեցու ժամանակագրության շարունակողը՝ «ի թվին ՊՀԲ (1423) մեռաւ Մելիքն Վաստանայ՝ և հայրն նորա ամիր Եզդին և իւր որդի»[41]։

Սամվել Անեցու շարունակողի այս վկայությունը հաստատում է մի հիշատակագիր. «...իսկ ի յ ՊՀԲ (1423) թվին գնաց նոյն Սքանդարն բազում զապաւք ի վերայ Ավրելոյ և էառ զնա. և իշխան աշխարհիս Մերոյ գնացեալ առ նա բազում ընձայիւք ի գործ պատերազմին, և նա դեղ մահու արբուցեալ իշխանին Մերոյ Մէլիք-Մահմադին՝ սպան զնա և անհնարին սուգ և անմխիթար տրտմութիւն եհաս աշխարհիս մերոյ»[42]։ «Մելիք-Մահմադի» սպանությունը պետք է բացատրել նրանով, որ հաքքարի իշխանը հավանաբար անհնազանդություն էր ցուցաբերել Կարակոյունլու Սքանդարին։ Այս շրջանում նորից փոխվել էր ուժերի հարա-

բերակցությունը։ Թամուրյանները դեռ 1419 թ.՝ Լանկթամուրի որդի Շահռուխի օրոք գաղտնի դաշնակցել էին ակ-կոյունլու Կարա-Օսմանի (1378—1435) հետ, որն իր հերթին հարձակումներ էր գործում Կարա-Կոյունլու պետության արևմտյան սահմանների վրա[43]։ 1421 թ. օգոստոսի 1-ին Լանկթամուրի որդի Շահռուխը հսկայական բանակով Վաղարշակերտի դաշտում՝ Բագավանի մոտ Կարա-Յուսուֆի որդուն՝ Սքանդարին խայտառակ պարտության է մատնում։ Սքանդարն ու իր եղբայր Սպանդիարը փախչում են Մերդինի ու Մոսուլի կողմերը, իսկ Շահռուխը մեծ ավարով վերադառնում է Խորասան[44]։

Թամուրյանների այս հաղթանակից հետո (1421 թ.) Վանի և Ոստանի տեր Մելիք-Մահմադը հավանաբար լքել էր Թամուրյան տիրակալ Շահռուխին։ Քուրդ ամիրի նոր կողմնորոշման օգտին է խոսում Շարաֆխան Բիթլիսին. «824 (1421) թ. անսահման երջանկությամբ և հաջողությամբ համակված մալիք Մուհամմադ իբն մալիք Իզզ ադ-դինին, Բաղեշի և Խլաթի վալի (կառավարիչ) Շամս ադ-դին ամիրին վիճակվեց համբուրել Թիմուր Գուրգան ամիրի որդի՝ Միրզա Շահռուխի գորգը։ Նրանք արժանացան կայսերական բարեհաճության, մեծաքանակ թագավորական առատաձեռնության և ստացան նոր հրովարտակներ կառավարման մասին։ Միրզա Շահռուխը դեռ այն ժամանակ, երբ Ալաշկերտի մոտակայքում թուրքմեն Կարա-Յուսուֆ ամիրի որդիների հետ արյունահեղ ճակատամարտ էր մղում, իրենց տիրույթները գնալու թույլատրություն էր շնորհել նրանց»[45]։

Մելիք-Մահմադի սպանությունից հետո Ոստանում (Ռշտունիք) իշխում է նրա եղբայր սուլթան Ահմադը, որն արժանանում է նույն բախտին։ 1425 թ. Աղթամարում գրված Ավետարանի հիշատակարանը կարևոր մանրամասներ է հաղորդում. «...չար բրոնաւորն ամիրզա Սքանդարն՝ տէրն Թաւրիզոյ, ազգաւ Թուրք, զամիրապետն Ոստան քաղաքի՝ զսուլտան Ահմատն՝ ըմբռնեալ է և երկաթի կապանաւք ի յԱլընջոյ բերթն ի բանդի է եդեալ, խնդրելով ի նմանէ զանառիկ ամրոցս նորա։ Եւ զերկիրս Հայոց՝ զԱղբակ և զՔարպահ և զՈստանայ երկիրս, մինչ ի Բաղէշ անմարդաբնակ արարեալ....»[46]։

Վկայությունը ցույց է տալիս, որ Ոստան քաղաքի տեր սուլթան Ահմադը բանտարկվել է Երնջակում (Ալինջա), ապա սպանվել է կարա-կոյունլու Սքանդարի կողմից՝ Վանի բերդը չհանձնելու համար։ Նրա սպանությունից հետո, Վանում իշխում է նրա որդի Մելիք-Ասադը, որը չկարողանալով դիմադրել Սքանդարին, 1425 թ. հանձնում է Վանի բերդը և անձնատուր լինում։ Նույն թվականին նրա հորեղբայր Բահա ադ-դինը,

որը իշխում էր Ոստանում (Ռշտունիք) և Ուրմիայում, սպանվում է Սքանդարի կողմից։ Այդ մասին տեղեկություններ է տալիս Թովմա Մեծոփեցին. «...եւ յերկրորդ ամին (1424) թուականին եկն ի վերայ Բաղիշու եւ Խլաթայ, կոչեաց զամիրայն Շամշատին փեսա իւր... իսկ նորա բարկացեալ՝ հրաման եւ զօրաց իւրոց հատանել զգլուխ նորա։ Եւ ըմբռնեալ զտէրն Ռշտունեաց սուլդան Ահմադ անուն զորդի Եզդին ամիրային, և փութանակի եկն ի վերա դղեկին Վանա... և ի նոյն ամի ոչ կարաց առնուլ զնա, այլ երթեալ ի Թաւրէզ՝ ի նոյն ամին լռեաց, և զորդի Եզդին ամիրային զսուլդան Ահմատն սպան ի բերդն Երնջակայ։ Դարձեալ ի միւս ամին 874(1425) թուականին եկն դարձեալ ի վերա Վանայ, եւ նստաւ ի վերա նորա. եւ նեղեալ որդի քրդոյն Մէլիք Ասդ անուն՝ եւ ի նա զբերդն, եւ ազատեալ՝ ելեալ գնաց կահիւք եւ ընչիւք ի Ջուլամերկ։ Եւ ի նոյն ամին սպանին զհօրեղբայրն նորին Պահաթին անուն առեալ զերկիրն Ռշտունեաց եւ զկղզի Աղթամարայ...»[47]։

Ինչպես տեսնում ենք, Սքանդարը 1424—1425 թվականների ընթացքում կարողանում է գրավել հաքքարի ամիրների հիմնական տիրույթները։ Վանում դիմադրություն ցույց տվող Ահմադի որդի՝ Մելիք-Ասադը ջախջախվում է, հանձնում բերդը և փոխադրվում Ջուլամերկ (Ջուլամերիկ) բերդը։ Սրանից հետո Սքանդարի զորքերը գրավում են նաև Ուրմիան և սպանում Ահմեդի եղբորը՝ Բահա-ադ-դինին։

Սքանդարի երկու տարվա մղած մարտերը նպատակ ունեին գրավել հաքքարի ամիրների բոլոր տիրույթները և վերջ տալ կիսանկախ ամիրների կենտրոնախույս ձգտումներին։ Լ. Խաչիկյանը ճիշտ է նկատել, որ հարավային Հայաստանի մի շարք շրջաններում՝ Բաղեշում, Ռշտունիքում, Խիզանում և այլուր հաստատված քրդական կիսանկախ ամիրությունները, տեղական շահերից ելնելով, բախվում էին կենտրոնական իշխանության հետ, վտանգի պահին լքում էին իրենց սյուզերենին և հաճախ հանդես էին գալիս թշնամիների բանակում[48]։ Մեր կարծիքով, նշված հանգամանքները դրդապատճառ դարձան Սքանդարի 1424—1425 թթ. արշավանքների, որոնք, փաստորեն, վերջ տվեցին հաքքարի քրդական ամիրության անկախությանը։

Վանի և Ոստանի հաքքարի ամիրների տոհմաբանությամբ զբաղվող մասնագետները որպես իշխանության հիմնադիր հիշատակում են ոմն Ասադ ադ-դին Քալանի իբն Իմադ ադ-դինին, որից իբր սերում են ԺԵ դարի 80—90-ական թթ. նշանավոր Իզզ ադ-դին Շիրը և նրա հետնորդները[49]։

Ո՞վ է, և ե՞րբ է իշխել Ասադ ադ-դին Քալանի կոչեցյալը. Շարաֆ-խանը վկայում է. «Հաքքարի կառավարիչների հետնորդներից մեկը՝ Ասադ ադ-դին Իբն Գուլաբի (Իբն) Իմադ ադ-դինը ճակատագրի բերումով ընկել էր Եգիպտոս (և) ծառայում էր չերքեզ սուլթաններին...

Երբ Իրանում իշխանության գլուխ անցավ Հասան-Բեկ ակ-կոյունլուն, նա անբարյացակամություն դրսևորեց Քրդստանի կառավարիչների հանդեպ և Սուֆի Խալիլին ու Արաբշահ-բեկին, որոնք պատկանում են Թուրքմեն ակ-կոյունլու մեծամեծ ամիրներին (դասին), ուղարկեց Հաքքարիյա (Հաքքարի) վիլայեթը նվաճելու։ Սուֆի Խալիլը որոշ ժամանակ սպասեց հարմար առիթի։ Շուտով այդպիսի առիթ եղավ և ինքը հարձակվեց Հաքքարի կառավարչի՝ Իզզ ադ-դին Շիրի վրա, որը այդ ժամանակ այդ նահանգների կառավարիչն էր... Սուֆի Խալիլը և Արաբշահ-բեկը հարձակվեցին նրա վրա և սպանեցին»[50]։ Այնուհետև Շարաֆ-խանը հաղորդում է, որ Ասուրի ռայյաթները, որոնք ուղևորվել էին Եգիպտոս և Սիրիա՝ արհեստագործության և առևտրի համար, տեսնելով Ասադ ադ-դին Ոսկեբազուկի գործունեությունը, իրար մեջ որոշում են, որ այդ մարդը հարմար է Հաքքարիյայի կառավարման գործին։ Նրանք այդ մասին հայտնում են Ասադ ադ-դինին, որը համաձայնվում է և մի խումբ Ասուրիների ուղեկցությամբ գալիս է Հաքքարիյա վիլայեթը։ Մի շաբաթ օր Ասադ ադ-դինը մի խումբ քաջամարտիկների հետ ներխուժում է Դիզ բերդը, վիլայեթը մաքրում թշնամիներից և իշխանությունն այսպիսով երկրորդ անգամ անցնում է հաքքարի կառավարիչներին։ Շաբաթ օրը, այդ ժողովրդի լեզվով կոչվում է «Շամբո», դրա համար նրանք հայտնի դարձան որպես Շամբոյան կառավարիչներ։ Ասադ ադ-դինի մահից հետո իշխեց որդին՝ Իզզ ադ-դին Շիրը և թոռը՝ Զահիդ-բեկը[51]։

Շարաֆ-խանի՝ «Հաքքարի իշխաններին» հատկացված գլխում կարելի է տարբերել երկու իշխաններ «Իզզ ադ-դին Շիր» անունով։ Մեկը իշխել է Ասադ ադ-դին Իբն Գուլաբի ամիրից առաջ. նա հիշատակվում է Վանի բերդի գրավման կապակցությամբ (1387 թ.)[52], նրա մահից հետո Եգիպտոսից այստեղ է փոխադրվում Ասադ ադ-դին Իբն Գուլաբին (Ոսկեբազուկը)։ Իսկ մյուս ամիրը եղել է հենց Ասադ ադ-դին Իբն Գուլաբի որդին, որը իշխել է հոր մահից հետո։ Որքան էլ տարօրինակ լինի, «Ասադ ադ-դին իբն Գուլաբի իբն Իմադ-ադ-դին» ամբողջական անվան առաջին «իբն» (որդի) բառը բաց է թողնվել ուսումնասիրողների կողմից, իսկ Գուլաբի (كلابي) անունը գրչական սխալի հետևանքով վերածվել է Քալանի (كلاني) ձևի, քանի որ (كلابي) (Գուլաբի) ան-

վան «բա» տառի կետի տեղափոխությունը վերև հեշտությամբ կարող է առաջ բերել Քալանի (كلاني) անունը։ Այս աղավաղումը ամենայն հավանականությամբ կատարվել է Շարաֆ-նամեի՝ արաբ թարգմանիչների և հրատարակողների կողմից։ Քուրդ իշխանի անվան Քալանի աղավաղված ձևն էլ մտել է գիտական գրականության մեջ և նրա ամբողջական անունը Ցամբաուրի և Մ. Ամին Զաքիի կազմած տոհմածառի ցուցակում բերված է որպես «Ասադ ադ-դին Քալանի իբն Իմադ ադ-դին»[53], որը պետք է սրբագրել որպես Ասադ ադ-դին իբն Գուլաբի իբն Իմադ ադ-դին։ Սակայն գիտական գրականության մեջ տեղ են գտել ժամանակագրական բնույթի անճշտություններ ևս։ Այսպես, հիշյալ Իզզ ադ-դին Շիր ամիրը, որն իշխել է Ասադ ադ-դինից շատ առաջ՝ ԺԴ դարում, նույնացվել է ԺԵ դարի 80—90-ական թվականներին իշխած Իզզ ադ-դին Շիր Բ-ի հետ։ Այդ իսկ պատճառով վերոհիշյալ ուսումնասիրողների կազմած տոհմածառի մեջ Իզզ ադ-դին Ա-ն առհասարակ բացակայում է։ Այս բացակայությունը առաջացել է մասամբ հենց ուսումնասիրողների մեղքով, որոնք պարզապես սխալ են տարանջատել Շարաֆ-նամեի տեղեկությունները և մասամբ՝ Շարաֆ-խանի մեղքով, հավանաբար, իր նյութերի բանաքաղության և սխալ տեղադրության հետևանքով։ Այսպես, Ասադ ադ-դին իբն Գուլաբի իբն Իմադ ադ-դին խորագրի տակ սկզբից Շարաֆ-խանը խոսում է Ասադ ադ-դինի՝ Եգիպտոս ընկնելու հանգամանքների մասին, որը մի կողմ թողնելով, այնուհետև պատմում է, թե նրանից առաջ Հաքքարիյայում իշխող Իզզ ադ-դին Շիրի վրա հարձակվում են ակ-կոյունլու զորավարներ Սուֆի Խալիլը և Արարշահ-բեկը, սպանում նրան և գրավում նրա տիրույթները։ Նրա ըսպանությունից հետո Եգիպտոսից այստեղ է փոխադրվում Ասադ ադ-դին իբն Գուլաբի իբն Իմադ ադ-դինը (Ոսկեբազուկը), որը գրավելով Դիզ ամրոցը և Հաքքարիյա վիլայեթը մաքրելով թշնամիներից, վերականգնում է հաքքարի քրդական իշխանությունը։ Այս հատվածից հետո, այսինքն Ասադ ադ-դինի բնական մահից հետո, իշխում է նրա որդի Իզզ ադ-դին Շիրը (Բ), և այնուհետև թոռը՝ Զահիդ-բեկը։

Վերլուծելով Շարաֆ-խանի տեղեկությունները վերոհիշյալ գլխում, պետք է նշել, որ Շարաֆ-խանը նույնպես չի տարբերել Իզզ ադ-դին Շիր անունով երկու իշխաններին, այդ իսկ պատճառով իր ձեռքի տակ ունեցած նյութերը հաքքարիների պատմության բաժնում ներմուծելու ժամանակ անճշտություն է թույլ տվել, այն է՝ սխալ տեղ են ընկել, որից և առաջացել են ժամանակագրական աղավաղումը և ժամանակավրիպումները։ Այսպես, օրինակ, ըստ Շարաֆ-խանի՝ Իզզ ադ-դին Շիր Ա-ն եղել

է ակ-կոյունլու զորավարների ժամանակակիցը, այնինչ իրականում Իզզ ադ-դին Շիր Բ-ն է եղել ակ-կոյունլու զորավարների ժամանակակիցը, իսկ Իզզ ադ-դին Ա-ն եղել է թամուրյանների և կարա-կոյունլու տիրակալների ժամանակակիցը։ Շարաֆ-խանի տված տեղեկությունները Իզզ ադ-դին Շիր Ա իշխանի սպանության մասին չեն հաստատվում հայկական, ապա պարսկական պատմողական աղբյուրների տվյալներով։ Այսպես, ըստ Շարաֆ-խանի տվյալների, Իզզ ադ-դին Շիրը սպանվել է ակ-կոյունլու զորավարներ Սուֆի Խալիլի և Արաբ-շահ-բեկի կողմից[54]։ Սակայն Շարաֆ-խանի տեղեկությունների համեմատությունը հայկական, ապա պարսկական և այլ աղբյուրների տվյալների հետ ցույց է տալիս, որ այս Իզզ ադ-դին Շիր (Եզդին-Շեր) ամիրը (Բ) իրականում սպանվել է ոչ թե Սուֆի Խալիլի կողմից, այլ ակ-կոյունլու զորահրամանատար Սուլեյման Բիժան օղլու կողմից։

1489 թ. գարնանը (Ռաջաբ II 894) ակ-կոյունլու Յակուբ սուլթանը Սուլեյման-բեկ իբն Բիժանին ուղարկեց Վանա լճից հարավ ընկած քրդական շրջանները՝ ակ-կոյունլուների հսկողությունը այնտեղ վերականգնելու համար։ Սուլեյման-բեկը արագորեն ընդունեց մի շարք ապստամբ ցեղապետերի հպատակությունը, այնուհետև գրավեց նրանց լեռնային ամրությունների զգալի մասը, սակայն ապստամբության ղեկավարներ Ամադիայի Հասան Բահդինանին և Հաքքարիյայի Իզզ ադ-դին Շիր Ազիզանին բռնելու նրա ջանքերը հաջողությամբ չպսակվեցին[55]։

Ակ-կոյունլու սուլթան Յակուբի (1478—1490) գահակալության ժամանակ քուրդ ցեղապետերի միացյալ ապստամբությունը ձախողվում է, մեծ վեզիր և զորահրամանատար Սուլեյման-բեկը նոր արշավանք է կազմակերպում քուրդ իշխան Իզզ ադ-դին Շիրի դեմ, որը դաշնակցել էր Երզնկայի կառավարիչ Գուլաբի-բեկի և ակ-կոյունլու զորահրամանատար Սուֆի Խալիլի հետ։ Այդ մասին Ճառընտիրի հիշատակարանում 1491 թ. վկայում է Մովսես գրիչը. «...իսկ Սուլէյմանն կոտորեաց զքուրդն Էզդինշեր, որ եկեալ էր յետնէ՝ դարան գործել նմա, անձինս ԳՌ (3000)։ Եւ անտի դարձեալ դիմեաց ի վերայ Սօֆուն, և եհաս ի դաշտն Վանայ, և կոտորեաց զնա անդ և առեալ զորդի փատշահին և տարեալ եդ ի թաղթն»[56]։ Այս հիշատակության մեջ Եզդին-Շերը հանդես է գալիս որպես Սուֆի Խալիլի դաշնակիցը և ոչ թե հակառակորդը։ Այդ ճակատամարտի մասին վկայում է նաև պարսիկ հեղինակ Ֆազլուլահ իբն Ռուզբիհան Խունջին. «Գուլաբիի[57] զորագնդերի դժոխային չարակամության լուրը Սուֆի Խալիլի լրտեսին հասնելուց առաջ մեծ Ամիրը (Սուլեյման իբն Բիժան—Ա. Խ.) նետվեց ճակատամարտի նրա (Սուֆի Խա-

.լիլի—Ա. Խ.) հետ և դաժան ճակատամարտից հետո, Վանի և Ոստանի միջև, կոտորեց թշնամու անթիվ զորքը։ Այս երկու արշավանքների ընթացքում նա (Մեծ Ամիրը) աղվեսի նման ցանցի մեջ բռնեց նաև քուրդ Իզզ ադ-դին Շիրին»[58]։

Հավանաբար այս ժամանակ Իզզ ադ-դին Շիրը (Բ) մահապատժի է ենթարկվում Ուզուն-Հասանի զորահրամանատար և մեծ վեզիր Սուլեյման իբն Բիժանի կողմից, որի ձեռքում էին գտնվում Վասպուրականի մի շարք գավառները և մասնավորապես Վան քաղաքը իր շրջակայքով[59]։ Պետության ղեկն իր ձեռքը վերցնելու համար, նա արյունահեղ գահակալական պայքարի մեջ էր անվանի զորահրամանատար Սուֆի Խալիլի հետ[60]։ 897 (1492) թ. աշնանը Վանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում Սուֆի Խալիլը սպանվում է Դիարբեքիրի տեր Սուլեյման իբն Բիժան օղլու կողմից[61]։

Անդրադառնալով Շարաֆ-խանի տեղեկությանը Իզզ ադ-դին Շիր Բ-ի սպանության մասին, պետք է ասել, որ այն չի հաստատվում հայկական և պարսկական աղբյուրների տվյալներով։ Իզզ ադ-դին Շիր իշխանի մասին հայկական աղբյուրները տեղեկություններ են հաղորդում դեռ ԺԵ դարի 60-ական թվականներից[62]։ Այս տեղեկություններից երևում է, որ հաքքարի իշխանները նորից գլուխ էին բարձրացրել և գրավել իրենց նախկին տիրույթները (ԺԴ դարում) Վանում և Ոստանում։ Այս հանգամանքը պետք է բացատրել նրանով, որ ակ-կոյունլու սուլթանները ԺԵ դարի վերջին քառորդում այնքան էին թուլացել, որ չէին կարող ճնշել մանր իշխանությունների կենտրոնախույս ձգտումները։ Դահի համար պայքարի մեջ էին քայքայվող պետության զորավարները՝ Սուլեյման իբն Բիժանը, Սուֆի Խալիլը և Մուբարիզ ադ-դին Բայանդուր-բեկ իբն Ռուստամ-բեկը, նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր գահ բարձրացնել իր թագաժառանգին և այսպիսով պետության ղեկը վերցնել իր ձեռքը։

Վանում և Ոստանում Իզզ ադ-դին Շիր Բ-ի մահից հետո իշխում է նրա որդի Զահիդ-բեկը, որը 1498 թ. գրավում ու կողոպտում է Աղթամար կղզին[63]։ Այս իշխանի և նրա հաջորդների մասին հարուստ տեղեկություններ է տալիս Շարաֆ-խանը, սակայն նրանց իշխանության պատմությունը դուրս է գալիս սույն հոդվածի սահմաններից։

Ի մի բերելով աղբյուրների տեղեկությունները հաքքարի իշխանների ժամանակագրության և տոհմաբանության վերաբերյալ, պետք է ասել, որ հաքքարի իշխանները հարավային Հայաստանում (Ոստանում) հաստատվել և իշխել են ոչ թե ԺԴ դարի 80-ական թվականներից, այլ նույն դարի 30-ական թվականներից։ Հաքքարի իշխանության հնագույն ներ-

կայացուցիչը և հիմնադիրը պետք է համարել արաբերեն վիմագրի Իզզ ադ-դին իշխանին (1335 թ.)։ Թե որքան է իշխել այս Իզզ ադ-դինը, դժվար է որոշակի ասել։ Համենայն դեպս հայկական աղբյուրներից ԺԴ դարի 80-ական թվականներից հիշատակվող Եզդին-Շերը (Իզզ ադ-դին Շիր) իշխել է մինչև ԺԵ դարի երկրորդ տասնամյակը (1412 թ.)։ Աղբյուրների տեղեկությունները թույլ չեն տալիս ավելի հաստատուն եզրակացություններ անել և արաբական վիմագրի ու հայկական աղբյուրների նույնանուն իշխաններին նույնացնել, քանի որ նրանց մեջ ժամանակի առումով գոյություն ունի մոտ 50 տարվա տարբերություն։

Ելնելով այն փաստից, որ և՛ հայկական աղբյուրներում, և՛ արաբական վիմագրում մալիք (ամիր) Իզզ ադ-դինը հիշատակվում է որպես Ոստան և Վան քաղաքների կառավարիչ, կարելի է ենթադրել, որ խոսքը միևնույն անձնավորության մասին է, թեև նման երկարատև իշխանությունը (1335—1412 թթ.) քիչ հավանական է։ Մյուս կողմից, քանի որ Իզզ ադ-դին Շիրի ամիրապետության վերաբերյալ հիշատակություններ են հանդիպում նրա մահից հետո (ընդհուպ 1445 թ., մինչդեռ նա մահացել է 1423 թ.), ուստի բացառված չէ, որ դեռևս ԺԵ դարի առաջին տասնամյակից սկսած հայ գրիչները ավանդաբար շարունակել են հիշատակել նրա ամիրապետությունը (իշխանությունը), թեև նա ասպարեզից արդեն հեռացել էր։

Իզզ ադ-դին Շիր իշխանի և նրա որդիների ու թոռների իշխանությանը վերջ է դրվում 1424—1425 թթ. կարա-կոյունլու սուլթան Սքանդարի կողմից։

Հայկական աղբյուրներից հայտնի են Իզզ ադ-դին Շիրի (Ա) հետևյալ որդիները՝ Մելիք-Մահմադ, սուլթան Ահմադ, թոռներ՝ Մելիք-Ասադ և Փիրի-բեկ։ Այս Մելիք-Ասադը 1425 թ. Վան-Ոստանից տեղափոխվեց Ջուլամերիկ և հաստատվեց այնտեղ։

Հաքքարի կառավարիչները եղել են հարավային Հայաստանի մի քանի գավառների կիսանկախ իշխանները։ Նրանք գլուխ են բարձրացրել մոնղոլների իլխանական կայսրության քայքայման շրջանում՝ ԺԴ դարի 30-ական թթ.։ Հետագայում, նրանք հպատակվել են սկզբից Ջորանյաններին, ապա ջելաիրյան և թամուրյան տիրակալներին։ Կարա-կոյունլու պետության ամրապնդման շրջանում որպես Թամուրյանների դաշնակից, նրանք բախվել են կարա-կոյունլու սուլթաններ Յուսուֆի և Սքանդարի հետ։ ԺԵ դարի առաջին քառորդում Հաքքարի իշխանները մերթ հնազանդվել են Թամուրյաններին, մերթ կարա-կոյունլու սուլթաններին և

հանդես եկել նրանց հակառակորդների դեմ։ Այս անկայուն վարքագիծը պատճառ է դառնում նրանց իշխանության կործանման 1424—1425 թթ.։ ԺԵ դարի երկրորդ կեսում հաքքարի իշխանները նորից դուրս են բարձրացնում Վանում և Ոստանում։ Ավելի ուշ ԺԶ—ԺԷ դարերում հաքքարիների իշխանությունը տարածվում է ավելի մանր՝ Զուլամերիկի, Ոստանի, Խոշաբի և Բերկրիի իշխանությունների։

Ի մի բերելով տարբեր աղբյուրներում պահպանված տեղեկությունները հաքքարի իշխանների և նրանց շառավիղների մասին, ստորև ներկայացնում ենք նրանց ճյուղագրությունը ԺԴ—ԺԵ դարերում։

Վան-Ոստանում, Անձևացիքում, Աղբակում և Հաքքարիյայում իշխող (ԺԴ—ԺԵ դդ.) ամիրաների տոհմագրությունը



А. А. ХАЧАТРЯН

ОБ ОБРАЗОВАНИИ КУРДСКОГО КНЯЖЕСТВА ХАККАРИ В XIV В.

Резюме

До сих пор считалось, что курдское княжество из рода Хаккари, охватывающее районы Вана (Тосп), Востана (Рштуник) и Джуламерика (Хаккарийа), было образовано примерно в 80-х годах XIV в. Однако дошедшая до нас арабская надпись мавзолея «Халима Хатун» в Востане, датированная 736/1335 г. показывает, что курдский эмир из рода Хаккари-Изз ад-дин (Шир) утвердился в районе Востана в 1335 г. Таким образом, следует пересмотреть вопрос образования княжества Хаккари и дату формирования его отодвинуть назад примерно на 50 лет.

Курдские эмиры из рода Хаккари были полунезависимыми правителями в нескольких областях (Тосп, Рштуник, Андзевацик, Албак, Чахук и др.) Южной Армении и признавали верховную власть Джалаиридов, Тимуридов, Кара-Коюнлу и Ак-Коюнлу. В период господства султанов кара-коюнлу они не раз выходили из-под власти своих сюзеренов и переходили к другим, и часто появлялись в лагере противника. Подобная неустойчивая политика была одной из причин распада княжества в 1424—1425 гг.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *E. de Zambaur*. Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de l'Islam, Berlin, 1955, p. 264 (այսուհետև՝ Zambaur), հմմտ. արաբ. թարգմանություն՝ زامباور، معجم الانساب والاسرات الحاكمة في التاريخ الاسلامي جزء ثاني، اخرجه زكي محمد حسن بك وحسن احمد محمود، القاهرة، ١٩٥٢ ص ٣٩٥، محمد امين زكي، تاريخ الدول و الامارات الكردية في العهد الاسلامي، القاهرة، ١٩٤٩، ص ٣٨٠—٣٨١.
2. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 36, 58, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, մասն երկրորդ, 1958, էջ I—VII, նույնի՝ «Памятные записи армянских рукописей», автореф. док. дис., Ереван, 1968, с. 33—34.
3. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, 1950, էջ 153, հմմտ. «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայեան, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, էջ 114—115։
4. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 304—305։

5. ....الامير الكبير المقتول في مقاتلة الاكراد... تيمور تاش بن الامير الكبير تورتاش... տե՛ս A. Kemali, Ahlat kitabeleri, Istanbul, 1936. S. 75։

6. Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և հաշորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 29 (այսուհետև՝ Թովմա Մեծոփեցի)։

7. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 389։

8. Նույն տեղում, էջ 414, հմմտ. «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», էջ 203—204։

9. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 21։

10. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Ե., 1977 (այսուհետև՝ Մանանդյան, հ. Գ), Zambaur p. 253.

11. Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Ցառաջաբանով, համեմատութեամբ, յավելվածներով և ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 170 (այսուհետև՝ Սամվել Անեցի, շարունակող), հմմտ. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, էջ 347, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 22։

12. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 22—23։

13. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 554։

14. Répertoire chronologique d'epigraphie arabe, publié sous la direction de Et. Combe, de J. Sauvaget et de G. Wiet, t. XV, le Caire, 1956, pp. 65—66, (№ 5696)։

15. Այս վիմագրի տեքստը և թվականը մեր խնդրանքով տեղում ստուգել է իրաքցի քուրդ պատմաբան Ա. Ռ. Ցուսուֆը։ Նա վկայում է, որ երկտողյա վիմագիրը կարդացվում է սահուն, թվականը և գրչությունը ոչ մի կասկած չեն հարուցում, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

16. ԺԲ—ԺԴ դարերի արաբ հեղինակները վկայում են, որ հաքքարի ցեղախումբը տարածվում էր Մոսուլից դեպի հյուսիս ընկած Ջազիրաթ Իբն Ումարի շրջաններում, ավաններում և գյուղերում։ Այս երկրամասը հայտնի դարձավ «Հաքքարիյա» տեղանունով (տե՛ս ياقوت الحموى، معجم البلدان، مجلد خامس بيروت، بدون سنة، ص ۴۰۸ ابوالفداء، تقويم البلدان، باريس، ۱۸۴۰، ص ۲۷۵ "الحكارية". المنجدفي اللغة و الاعلام، بيروت، ۱۹۸۳، ص ۷۳۹:

Որպես տեղանուն ԺԲ դարում Հաքքարիյան ընդգրկում էր Մեծ Զաբի վերին հոսանքի ընդարձակ գոտին Ջուլամերիկ (Ջլմար) գլխավոր քաղաք-ամրոցով (տե՛ս „Hakkari", EI, N. E., t. 3, Leiden—Paris,, 1971, p. 85, F. Taeschner, „Colemerik", EI, E., vol. 2, Leiden—London, 1965, p. 57)։

17. Թովմա Մեծոփեցի, էջ 30։

18. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 58, Մանանդյան, հ. Գ, էջ 363, Ղ. Ալիշանը կասկածելի է համարում այս ազգակցությունը (տե՛ս Հայապատում, էջ 555, ծան. 1)։

19. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, մասն Ա, Պեյրութ, 1960, էջ 1986 (№ 1371), 2010 (№ 1389), հմմտ. Հ. Մանանդյան—Հ. Անառյան, Հայոց նոր վկաներ, Էջմիածին, 1903, էջ 189, 191—192, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 597, «ԺԵ դարի հիշատակարաններ», Բ, էջ LVII։

20. B. Karamagarali, Ahlat mezartaşlari, Güven Matbaasi, Ankara, 1972, s. 242: (No 106): Այս վիմագրի թվականը ճշտելու համար հետազոտող Բ. Կարամագարալին հիմք է ընդունում մոտակա տապանագրի 815(1412) թվականը և Փաշա Խաթունի արձանագրությունը թվագրում է դրանից մի քիչ առաջ՝ 790—800 (1388—1398) թվականների արանքում (տե՛ս նշվ. աշխ., էջ 242)։

21. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 597, նաև XII (առաջաբան)։
22. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 563, հմմտ. «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», էջ 117։
23. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 715։
24. Թովմա Մեծոփեցի, էջ 71, հմմտ. «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 8։
25. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, մասն Ա, էջ 1993—1994 (№ 1376), հմմտ. Մանանդյան—Անասյան, Հայոց նոր վկաներ, էջ 182—183։
26. Մանանդյան, հ. Գ, էջ 366։
27. Թովմա Մեծոփեցի, էջ 47։
28. *F. Sumer*, Qara-Qoyunlu, EI, N. E., vol. IV, Leiden—London, 1975, p. 586.
29. Թովմա Մեծոփեցի, էջ 47—48։
30. Նույն տեղում, էջ 48։
31. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 621։
32. Նույն տեղում, էջ 622։
33. Թովմա Մեծոփեցի, էջ 70։
34. «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 580։
35. Նույն տեղում, էջ 220։
36. Նույն տեղում, էջ 231։
37. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 36, 58։
38. Մի հիշատակագիր նշում է. «... արդ (1444) շինեցաւ ի հիմանց սուրբ Վարդան զաւրավարի գումբեթաձև և երկնանման տաճարն՝ ... ի ղանութեան Ղարա-Յուսուֆին, յամիրապետութեան Ոստան քաղաքի՝ Ամիր-Էզդրնին և որդոյն իւրոյ Մէլիք-Մահմադին» (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 565)։ Նույն թվականին այլ հիշատակագիր նշում է. «...յամիրապետութեան երկրիս Մէլիք-Մահմադին և հաւրն իւրոյ և մօրն, և...» (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 566)։
39. Սամվել Անեցի (շարունակող), էջ 172—173։
40. Նույն տեղում։
41. Նույն տեղում։
42. «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 375։
43. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 34։
44. Թովմա Մեծոփեցի, էջ 81, հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 35, Մանանդյան, հ. Գ, էջ 384—385։
45. Scheref-nameh ou Histoire des Kourdes par Scheref, prince de Bidlis, publ. pour le premiere fois, trad. et annotè par V. Veliaminof-Zernof, t. 1, texte persan, premiere partie, St-g, 1860, p. 91 (այսուհետև՝ Scheref-nameh, 1, 1), Cheref-nameh ou fastes de la nation kourde par Cheref-ouddine, prince de Bidlis, dans l'Iialet d'Arzeroume, trad. du persan et commentes par F. B. Charmoy, t. 1, pt. 2, St-g. 1870, p. 118—119 (այսուհետև՝ Cheref-nameh, 1, 2).
46. «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 326, 328, 376, Սամվել Անեցի (շարունակող), էջ 173, «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», էջ 353, Մանանդյան, հ. Գ, էջ 386—387։

47. Թովմա Մեծոփեցի, էջ 84, հմմտ. «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 326, 328, 375, 376, Սամվել Անեցի (շարունակող), էջ 173, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 36, 58, Մանանդյան, հ. Գ, էջ 386։

48. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 36։

49. Zambaur, p. 264, արաբ. թարգ., հ. 2, էջ 395, հմմտ. محمد امين زكى، تاريخ الدول والامارات الكردية، ص. ٣٧٠–٣٨١։

50. Scheref-nameh, I, 1, p. 92, Cheref-nameh, I, 2, p. 117—118.

51. Scheref-nameh, I, 1. p. 93, Cheref-nameh, I, 2, p. 118—119.

52. Վանի բերդի գրավման ճիշտ թվականը պահպանվել է «Շարաֆ-նամեի» որոշ ձեռագրերում և արտացոլվել է Վ. Վելյամինով-Զերնովի հրատարակած պարսկերեն բնագրում (տե՛ս «Scheref-nameh», I, 1, p. 90)։ Շարաֆ-նամեի ֆրանսերեն թարգմանության մեջ թեև բնագրում պահպանվել է սխալ «787» թվականը, սակայն թարգմանիչ Ֆ. Շարմուան վերականգնում է այն և ծանոթագրությունների մեջ 787 սխալ թվականի փոխարեն տալիս է 789(1387 թ.) (տե՛ս «Cheref-nameh», 1, 2, p. 116, հմմտ. անդ 1, 1, p. 503, note 294)։ Դժբախտաբար, Շարաֆ-նամեի ռուսերեն թարգմանության մեջ այդ թվականը մնացել է սխալ ձևով և թարգմանչուհի Ե. Վասիլևան չի նկատել նախորդ թարգմանիչների ճշտումը և բուն տեքստում՝ հանգավորված բանաստեղծության վերջում բերված՝ كي وان بگرفت (ե՞րբ է վերցրել Վանը) խրոնոգրամման, որի թվական հանրագումարը (տառերի թվական արժեքների) հավասար է 789(1387) միավոր (տե՛ս Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I (перевод, примечания и приложения Е. И. Васильевой), М.» 1967, с. 153, 515 (прим. 273).

53. Zambaur, p. 264, արաբ. թարգ., հ. 2, էջ 395, հմմտ. Մ. Ա. Զաքի, Նշվ. աշխ., էջ 380—381։

54. „Scheref-nameh", I, I, p. 92, „Шараф-наме", I, с. 155—156.

55. J. E. Woods, The Aqquyunlu, clan, confederation, empire. A study in 15-th/9-th century turko-iranian politics, Minneapolis-Chicago, 1976, p. 156.

56. «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երրորդ (1481—1500 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, 1967, էջ 174 (այսուհետև՝ «ԺԵ դարի հիշատակարաններ», Գ)։

57. Ամիր-բեկի որդի Գուլաբի-բեկը Երզնկայի Թուրքմեն ակ-կոյունլու (Մոսուլլու) կառավարիչն է։ Նա մասնակցել է գահակալական պատերազմին և հանդես է եկել որպես Սուֆի Խալիլի դաշնակից (տե՛ս Woods, The Aqquyunlu, p. 163)։ Մեզ է հասել նրա արաբերեն արձանագրությունը, որը փորագրված է Երզնկայի «Մայր մզկիթի» մուտքի վրա 1489 թ. (տե՛ս A. Kemali, Erzincan Tarihi, Istanbul, 1932, s. 236).

58. V. Minorsky, Persia in A. D. 1478—1490. An abridged translation of Fadlullah b. Ruzbihan Khunjis „Tarikh-i alam-ara-yi amini", London, 1957, p. 24.

59. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 57, նաև 53։

60. Այդ մասին մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 51—53։

61. Minorsky, Persia, p. 113, հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 53։

62. «ԺԵ դարի հիշատակարաններ», Բ, էջ 22, 282։

63. «ԺԵ դարի հիշատակարաններ», Գ, էջ 277։